# community

The New Apostolic Church around the world

02/2017/AM

Տարածաշրջանային մի նոր եկեղեցի՝

## Հարավային Աֆրիկա

Ժամերգություն Ավստրալիայում՝ Հաստատուն խարիսխ

Խմբագրական՝ Ճանաչել Աստծուն և նրա արարչագործությունը

Եկեղեցական ուսմունք՝ Մեղքերի թողություն և առաքյալների պաշտոն

New Apostolic Church
International

# Ճանաչել Աստծուն և նրա արարչագործությունը

Լուսանկարը՝ ԵՄՀ ձեռնարկի միջոցով

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր,

Այս տարվա նշանաբանը՝ ,, Փառաբանություն Աստծուն՝ մեր Հորը,, պարունակում է երեք առաջադրանք, որոնք մենք ստանձնել ենք 2017 -ի համար: Ամենասկզբում դրված է Աստծո և նրա գործի փառահեղության ճանաչումը: Աստծո փառահեղությունն իր մեծության մեջ ճանաչելը շատ բարդ է: Սակայն Սուրբ Հոգու միջոցով մեզ համար հնարավոր է դառնում

Աստծո գործունեությունն ըմբռնելը: - Ի՞նչը պետք է ճանաչել:

Աստված արարել է տեսանելի աշխարհը: Ամեն ինչ գալիս է նրանից: Նրա կամքն է սկզբնաղբյուրն ամեն ինչի: Եկեք Աստծուն ճանաչենք որպես Արարչի և կասկածի տակ չդնենք նրա հեղինակությունը. ,,Իսկ եթե զարմանում են դրանց ուժի և ազդեցության վրա, ապա թող իմանան, թե որքան առավել ևս զորավոր է նա, որ ստեղծել է դրանք, քանզի արարվածների մեծությունից և գեղեցկությունից՝ նույն համեմատությամբ էլ երևում է դրանք արարչագործողը,, / Իմաստություն 13;4-5/:

Աստված արարել է անտեսանելի աշխարհը: Տեսանելի, նյութական արարչագործության կողքին Աստված ստեղծել է նաև հոգևոր աշխարհը: Այդ աշխարհին է պատկանում մարդու կենդանի հոգին: Աստված գցել է այն ճանապարհը, որով կարող է մարդը ետ դառնալ դեպի իրեն՝ իր հետ միասնություն կազմելու: ,, Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի, ով նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը,, / Հովհաննես 3;16/: Դա է ճանապարհը: Այդպես է մեզ ասում Սուրբ Հոգին:

Աստված մարդկանց տրամադրության տակ է դրել ողջ արարչագործությունը: Նա կա և մնում է սեփականատերը իր արարչագործության: Եվ նա հոգ է տանում այն բանի համար, որ իր արարչագործության մեջ ամեն ինչ շարունակվի: Մեզ՝ մարդկանցս, վստահել է պատասխանատու վերաբերմունք տեսանելի արարչագործության հանդեպ. ,,…տիրեցեք դրան,,/1. Մովսես 1;28/: Մենք պետք է նրա արարչագործությանը ուշադրությամբ վերաբերենք և ռեսուրսների հանդեպ պատասխանատվությամբ վարվենք:

Մենք պետք է Աստծուն որպես Արարչի ճանաչենք և գնահատենք: Տեսանելի և անտեսանելի արարչագործությունը բոլոր մարդկանց համար է ստեղծված: Այս ճանաչումը ելակետն է մեր գովաբանության և շնորհակալության, և այն հիմքն է, որ մենք Աստծու մասին խոսենք և նրա փառահեղությունը տեղեկացնենք:

Այս իմաստով էլ ես մեզ ցանկանում եմ աստվածային ձևաչափով վեհ հայացքներ :

Սրտագին ողջույններ՝

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

Շուրջ 1000 հավատացյալ էր հավաքվել Փերթի համերգասրահում գլխավոր առաքյալի հետ ժամերգությանը, Ավստրալիայի այլ համանքներում տեսահեռարձակման միջոցով ևս 1300-ը ապրեցին ժամերգությունը :

Լուսանկարը՝ Դ.Ամերիկյան

# Հաստատուն խարիսխ

Եբրայեցիներին 6;19,20

,,Որը /հույսը/ հաստատուն և անշարժ խարիսխ է մեզ համար. հույս, որ թափանցում է վարագույրից այն կողմ, ուր մեր նախակարապետը՝ Հիսուսը, մտավ մեզ համար՝ լինելով հավիտենական Քահանայապետ, ըստ Մելիքսիդեկի կարգի,,:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, այստեղ և միացված բոլոր համանքներում, թույլ տվեք, որ ես մեր բոլորի կողմից ելույթի համար շնորհակալություն հայտնեմ երգչախմբին : Տպավորիչ էր, ինչպես դուք ներկայացրիք ,,Տերն իմ լույսն է,, երգը: Ես վ ստահ եմ, որ յուրաքանչյուրը հոգով ձայնակցեց, քանզի մեր ցանկությունն է, ու ոչ՝ միայն ցանկությունը, այլ նաև մեր ամուր կամքը՝ միշտ Տիրոջ տանը գտնվելու: Մենք ուրախ ենք այստեղ՝ Ավստրալիայում լինելու համար, և ես կարող եմ ասել, որ այս անգամ դժվար չէր մեր եղբայրների հանդիպումն այստեղ կազմակերպելը: Բոլորը կողմանկից էին, որ դա տեղի ունեցավ Փերթում, և ինչպես սպասվում էր, եղավ շրջանային առաքյալների այս հավաքույթը, օրհնանք բոլորիս համար, քանի որ այն մեզ մեր հավատի մեջ ուժեղացրեց և մենք ընդհանրական աղոթքով,

հավատի վերաբերյալ մտքերի փոխանակմամբ և համայնքում ուրախության շնորհիվ կարողացանք ուժեղանալ: Իսկապես, օրհնանք էր այս մի քանի օրը միասին անցկացնել կարողանալը, դա ուժեղացրեց մեր հավատը և միասնությունը:

Ես վստահ եմ, որ ձեր նախապատրաստությունն այս օրվան ևս օրհնանք է բերել: Դուք միմյանց հետ շատ բան եք արել, միասին աղոթել եք, և, եթե միասին են աշխատում և աղոթում, միշտ օրհնանք է բերում: Հիմա բոլորս պետք է միասին ապրենք մեր երկնային Հոր օրհնանքը՝ խոսքով և ողորմածությամբ:

Հավանաբար դուք մի քիչ զարմացաք, երբ ես կարդացի աստվածաշնչյան խոսքը: Եբրայեցիներին գրված նամակի շատ խոսքերի նման այս խոսքը մի քիչ բարդ է թվում, սակայն ես կարող եմ ձեզ վստահեցնել, որ այն բոլորովին էլ դժվար չէ հասկանալ: Ես կարծում եմ, որ անգամ ես եմ այն հասկացել: Հեղինակը խոսում է հույսի մասին և այն համեմատում է խարսխի հետ: Ինձ թվում է, որ այստեղ՝ Փերթում պատկերն անմիջապես կհասկանան: Երբ նավը խարիսխ է գցում, ապա խարիսը սուզվում է ծովի հատակը և կանգնեցնում է նավը այնպես, որ փոթորկից և քամուց չկարողանա քշվել:

Խոսքում նշվում է, որ հույսը ,, հոգու մի խարիսխ,, է: Մենք հուսով ենք Աստծո հանդեպ, Քրիստոսի հանդեպ և այդ հույսը, այդ խարիսխը խոչընդոտում է, որ մենք չքշվենք, և մեզ ամուր է պահում մեր տեղում՝ Տիրոջ տանը, ինչպես դուք երգեցիք:

Այնուհետև ասվում է, որ խարիսխը ,, թափանցում է վարագույրից այն կողմ,,: Սա մի քիչ բարդ է, քանզի այստեղ մի այլ պատկեր է առաջ գալիս տաճարի վարագույրը, որը բաժանեց Ամենասուրբ խորանը, այն առանձնահատուկ վայրը, որտեղ, այն ժամանակվա հասկացողությամբ, Աստված էր բնակվում: Դա նշանակում է, որ մեր խարիսխը գցված է ամբողջովին առանձնահատուկ տեղում, այնտեղ, որտեղ Աստված է բնակվում: Մեր հույսը Աստծով է խարսխված: Ես կարծում եմ, որ այս պատկերը այսպես պետք է հասկանալ:

Հիմա հարց է առաջանում ինչի՞ հույս ունենք մենք: Ինչի՞ մասին ենք մենք խոսում: Երբ մենք ասում ենք, որ հույս ունենք ինչ-որ բանի, ապա կարծում ենք, որ ինչ-որ բանի ենք սպասում և հաշվի ենք նստում, որ դա կգա: Սա հույսի սովորական պարզաբանումն է: Հավատացյալների, քրիստոնյաների հույսը ավելին է նշանակում: Մենք սպասում ենք ինչ-որ բանի և գիտենք, որ Աստված այն կարող է հնարավորինս կատարել: Նա կարող է երևույթները իրականացել, որոնք մարդկանց մոտ անհնար են: Մենք հույս ունենք Աստծո հանդեպ, մենք նրան ենք ներկայացնում մեր ցանկությունները և գիտենք, որ նա դրանք կարող է իրականացնել, եթե դրանք իր կամքով լինեն: Դա քրիստոնեական հավատի վրա հիմնված հույսն է, որ այլ մակարդակի

> Աստվածը, ում նկատմամբ հույս ենք տածում, հավատարիմ է, նա կանի այն, ինչ խոստացել է:

Գլխավոր առաքյալին ուղեկցում էին 17 շրջանային առաքյալ և շրջանային առաքյալի 7 օգնական: Սրանից առաջ, նա նրանց հետ եղել էր նաև աշնանային հավաքույթի օրերին:

վրա է գտնվում և այլ որակ ունի , քան հույսն ընդհանուր առմամբ :

Մենք հույս ունենք և դա նշանակում է, որ մեր հայացքը վստահ է և ապագայի հանդեպ սպասումներով լի, քանի որ մենք հավատում ենք, այո, մենք գիտենք, որ Աստված իրականացնում է իր խոստումները: Սա է հույսը, որի մասին է այստեղ խոսվում, մեր հույսը: Ի՞նչ է խոստացել Աստված: Աստված մարդուն խոստացել է հավերժական կյանք, հավերժ միասնություն իր հետ: Սա Աստծո հիմնական խոստումն է, նրա առաջին խոսքը մարդկանց. ես կօգնեմ քեզ՝ ինձ հետ հավերժ միասնության գալու: Ապա, էլի մի ուրիշ աստվածային խոստում ենք ստանում: Հիսուսը խոստացել է.,, Եվ եթե գնամ և ձեզ համար էլ տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ ու ձեզ կվերցնեմ ինձ մոտ, որպեսզի ուր ես լինեմ, դուք ևս այնտեղ լինեք,,/ Հովհաննես 14;3/: Հիսուսի գալստյան խոստումը:

Աստված մարդկությանը մի երրորդ խոստում էլ է տվել.,,Քանի որ նոր երկինք ու նոր երկիր պիտի ստեղծեմ,,/ Եսայի 65,17/: Այնտեղ, Աստծո հետ հավերժ միասնության մեջ չարի,մահի և տառապանքի համար այլևս տեղ չկա; Դրանք խոստումներ են, որ Աստված տվել է մարդկությանը: Երբ մենք խոսում ենք հույսի մասին, ապա դառնում ենք այս խոստումներին, որոնց կատարմանը մենք հավատում ենք: Սա է մեր հույսը և այն խարսխված է Աստծով: Դրանք մարդու կողմից տրված խոստումներ չեն, այլ Աստծով հիմնված խոսքեր: ,,Մենք գիտենք, որ Աստված ճշմարտություն է; Աստվածաշունչն ասում է.,,Անհնար է, որ Աստված սուտ խոսած լինի,,/Եբրայեցիներին 6,18/: Այն ամենը, ինչ նա ասում է, ճշմարտություն է; Աստված, որի հանդեպ մենք հույս ունենք, հավատարիմ է, նա անում է այն, ինչ խոստանում է, դա հաստատուն, ամուր հենարան է, Աստված պահում է իր խոսքը: Նա ամենակարող է, ոչ ոք չի կարող նրան խանգարել անելու այն, ինչ նա է մտադրվել: Նրա վրա է խարսխված մեր հույսը:

Մեր խոսքով ասած, դա նշանակում է, որ մեր նախակարապետը մեզ համար է այնտեղ գնացել: Այս պատկերն ինձ դուր էգալիս; Ես չգիտեմ, թե այսօր էլ է այդպես, բայց առաջներում, երբ մեծ նավը չէր կարողանում ուղիղ կայանատեղիում խարսխվել, մի փոքր նավակ էին բերում, որպեսզի նրան դեպի հատկացված տեղը հրի այնպես, որ նավը ապահով կանգնի: Այս պատկերն է այստեղ հիմքում ընկած: Հիսուսը նախակարապետն էր, ով որպես հարություն առած, որպես առաջնեկ Աստծո թագավորությունը գնաց: Նա խարիսխ գցեց Աստծո մոտ: Մի գեղեցիկ պատկեր, այն ինձ դուր է գալիս: Նա բացել է ճանապարհը: Նա ամեն ինչ հնարավոր է դարձրել և ասում է .եթե դու հավատում ես, եթե դու հնազանդ ես, եթե ինձ հետևում ես, ապա դու էլ կարող ես հարություն առնել: Դու կստանաս հարության մարմին և իրավունք կունենաս այդ առանձնահատուկ վայրը գնալու, որտեղ Աստված է, որտեղ դու Աստծո հետ հավերժ միասնության մեջ կլինես: Ես հասել եմ դրան և քեզ էլ կօգնեմ դրանում, - դա է խոստանում նախակարապետը: Հիմա ինչ է անում նա այնտեղ: Նա աղոթում է մեզ համար: Նա մեր բարեխոսն է, ով գնացել է Աստծո՝ իր հոր մոտ մեզ համար: Սրա հիման վրա էլ մեր հույսը հաստատ է ու ամուր և այն խարսխված է Աստծով, նրանով,ով ճշմարտություն է, ով ամենազոր է: Այնտեղ է Հիսուսը՝ նախակարապետը, ով գնացել է մեզնից առաջ: Նա գցել է ճանապարհը և ամեն ինչ հնարավոր դարձրել, և նա աղոթում է մեզ համար: Այս հույսով, այս հաստատուն խարսխով մենք երբեք նավաբեկության չենք ենթարկվի:

Անշուշտ, մենք չենք կարող դեռ տեսնել այն, ինչի հույսը մենք ունենք: Աստվածաշունչն ասում է, որ հույսը, որը մենք տեսնում ենք, հույս չէ: Եվ ապա շարունակում է.,, Եթե հույս ունենք մի բանի, որը չենք տեսնում, ուրեմն՝ համբերությամբ սպասում ենք դրան,, / Հռոմեաց. 8;24,25/: Մենք չենք կարող մի բան, որի հանդեպ հույս ունենք, տեսնել, սակայն մենք տեսնում ենք հույսի ազդեցությունը մեր առօրյա կյանքում: Դա շատ կոնկրետ է, դա տեսնում են:

Երբեմն ընկնում են փոթորիկի մեջ, այդ դեպքում նավը քամու և ալիքների կողմից քշվում է այս ու այն կողմ, բայց հաստատուն, ուժեղ խարիսխը այն ամուր է պահում, անգամ մեծ փոթորիկը չի կարողանում այն տեղից պոկել: Խարիսխը այն ամուր պահում է իր տեղում: Թեև ուժեղ թափահարվում է, սակայն չի կորցնում իր ամուր հենարանը: Սա մի գեղեցիկ պատկեր է մեզ համար:

Այն իրողությունը, որ մենք հավատում ենք, որ Աստծո զավակներ ենք, որ մենք ունենք հույս, մեզ չի պաշտպանում ալիքներից այս ու այն կողմ նետվելուց: Մենք թափահարվում ենք փորձությունների միջոցով, մենք քննվում ենք և հաճախ, ստպված տառապում ենք, ինչպես մյուս մարդիկ են ստիպված լինում տառապելու, ովքեր չեն հավատում, ովքեր ևս այս ու այն կողմ են շպրտվում: Սակայն, մենք ունենք այս ուժեղ և ամուր խարիսխը և գիտենք, որ փառահեղությունը, որ Աստված ուզում տալ մեզ, ավելի մեծ է լինելու, քան տառապանքը, որ այսօր պատում է մեզ: Եթե մենք մի անգամ այդ առանձնահատուկ վայրում լինենք, այլևս չենք մտածի տառապանքի մասին, որը մենք այստեղ, երկրի վրա գտնվելու ժամանակ ենք ունեցել: Դա ուժեղ հույս է: Անշուշտ, տառապում ենք մենք, նավի նման այս ու այն կողմ ենք նետվում ալիքների կողմից, սակայն մենք չենք շեղվում ոչ Աստծուց, ոչ նրա հետ միասնությունից : Հույսը պահում է մեզ:

**Մենք վստահորեն և սպասումներով լի հայացքով ենք նայում ապագային**

Մենք հավատարիմ ենք մնում, քանի որ գիտենք, որ ինչ գալու է, ավելի մեծ ու նշանակալից է դառնալու, քան այն, ինչ այսօր պատում է մեզ: Դա մեր հույսի խարիսխն է, մի շատ ուժեղ, ամուր, հաստատուն խարիսխ: Լինում են ժամանակներ, երբ փոթորիկ չի լինում: Այստեղ՝ Փերթում, մենք հրաշալի ծովային պատկեր ըմբոշխնեցինք, լռություն, հանգստություն, շատ գեղեցիկ է: Սակայն, երբ անգամ ծովը հանդարտ է, նավը կարիք ունի խարսխի, որպեսզի փոթորկից չքշվի: Անգամ, եթե ոչինչ չի պատահում, մենք կարիք ունենք հույսի խարսխի: Միշտ չէ, որ տառապանք են ապրում, այլ ապրում են իրենց սովորական կյանքը, զբաղված են առօրյա գործնական հարցերով և շատ մարդիկ մոռանում են, որ Աստված կա, նրանք նրա կարիքը չեն զգում, ամեն ինչ լավ է գնում: Ես կարող եմ պատկերացնել, որ այստեղ՝ Ավստրալիայում շատերը կան, որոնց գործերը լավ են գնում, նրանք առողջ են, բարեկեցիկ և գոհ, և ստիպված չեն ամեն օր աղոթել Աստծուն.,, Օ, սիրելի Աստված, օգնիր ինձ,,: Ամեն ինչ կարգին է, իրենց կյանքն անցնում է հանգիստ:

Մենք՝ Աստծո զավակներս, խարիսխ ունենք և կարոտում ենք Աստծո հետ հավերժ միասնության: Անգամ, եթե մեր կյանքում ամեն ինչ կարգին է, մնանք մեր հույսի խարսխով Աստծո հետ կապված և երբեք չշեղվենք Աստծուց: Մենք ցանկանում ենք մեր Տիրոջը

տեսնել, ուզում ենք նրա հետ հավերժ միասնության մեջ լինել, ցանկանում ենք նրա մոտ լինել:

Անգամ, եթե Հիսուսը դեռ չի եկել, դեռ ոչինչ չի արել, ժամանակի երկարումը չի կարող մեզ խանգարել: Մենք մնում ենք մեր տեղում, Տիրոջ տանը, քանի որ մենք ինչ-որ բանի ենք սպասում: Մենք վստահությամբ ենք նայում դեպի ապագան: Անգամ, եթե ամեն ինչ կարգին է, եթե ոչինչ չի պատահում և երկար է տևում, մինչ Տերը նորից կգա, մնանք մենք մեր տեղերում: Այնտեղ մեզ կպահի մեր խարիսխը:

Երբեմն մենք գիտակցում ենք մեր թուլությունները և ամրագրում ենք, որ մենք իսկապես մեղավորներ ենք: Մենք մտադրվում ենք անելու այս կամ այն բանը, բայց չենք անում, թույլ ենք լինում; Մենք մեկին վիրավորում ենք, մեկին ցավ ենք պատճառում, մի տեղ սխալ ենք անում, և եթե ազնիվ լինենք, երբեմն կորցնում ենք համարձակությունը և մտածում. ես դա չեմ կարող անել: Այդ դեպքում ենք կարող ենք քշված լինել և ասել. ,, Չարժե, ես չեմ կարող, այդ ամենը ինձ համար չէ, ես թույլ եմ, ես մեղավոր եմ,,:- Ոչ: Դու ունես խարիսխ. մի մոռացիր, որ Մեկը Աստծո մոտ է, նա աղոթում է քեզ համար, նա քո բարեխոսն է:

Եկեք հուսանք Քրիստոսի ողորմածությանը: Անգամ, եթե մենք թույլ ենք, թշվառ մեղավորներ ենք, եթե ահավոր բաներ ենք արել, հուսանք ողորմածությանն այն գիտակցությամբ, որ մեր նախակարապետը՝ Հիսուս Քրիստոսը, արդեն այնտեղ է: Նա աղոթում է մեզ համար: Մենք հուսանք նրա ողորմածությունը: Հույսի խարիսխը մեզ կպաշտպանի Աստծուց հեռու քշվելուց և թույլ կտա մեզ՝ ամուր մնալ մեր տեղում: Մի՞թե դա հրաշալի չէ: Մեզնից յուրաքանչյուրը, ձեզնից յուրաքանչյուրը որևէ ձևով ծառայում է Աստծուն : Ես հիշում եմ հատկապես Նոր Զելանդիայի և սահմանակից երկրների եղբայրներին: Նրանք շատ են աշխատել և միշտ չէ, որ հասել են ցանկալի արդյունքի: Երբեմն դժվար է աշխատելը, ծառայելը և ամրագրելը, որ հաջողություն չի լինում, ոչինչ չի փոխվում:

Ես կարող եմ ձեզ ասել, որ մենք բոլորս ապրում ենք չարի իշխանությունը, որը չի ուզում, որ մենք ձտենք դեպի Աստծուն, որ մենք Ավետարանը շարունակենք կրել, որ Քրիստոսի գալուստը տեղեկացնենք: Մենք զգում ենք, թե ինչ հզոր է չարը: Դա, հավանաբար, կարող է մեզ ճանապարհից շեղել, սակայն մենք պետք է գիտակցենք, որ մենք ունենք հույսի խարիսխը, որը գցված է հաստատուն տեղում, ամուր հիմքի վրա, Աստծո վրա: Աստված խոստացել է իր առաքյալներին՝ մինչև վերջ նրանց հետ լինել: Նա խոստացել է, որ չարը չի հաղթի իր եկեղեցուն: Մենք հավատում ենք նրա խոստմանը և գիտենք, որ Ամենազորը՝ հավատարիմ Աստվածը, իր խոստումները կիրականացնի: Դրա համար մենք չպետք է դադարեցնենք: Մենք հույսով ենք Քրիստոսի հանդեպ, ինչպես Պողոսն է ասում: Մենք շարունակելու ենք աշխատել և Տիրոջը ծառայել այն գիտակցությամբ, որ մեր աշխատանքը իզուր չէ / 1. Կորնթացիներին 15,58/: Եղբայրներ, դա մեր խարիսխն է:

Մի վերջին կետ էլ. Պողոսն ասում է.,,Հույսով ուրախացեք,,/Հռոմեաց. 12,12/: Հույսը թույլ է տալիս մեզ ուրախ լինել, անգամ, եթե դրա համար տեսանելի պատճառ չկա; Խարիսխը տեսանելի չէ: Միայն տեսնում են, թե ինչպես է ներգործում . նավը չի շարժվում:

Հույսը մեզ ուրախություն է տալիս հենց միայն ապագայի մասին մտքերից, վստահ սպասելիքներով, թե ինչ է լինելու: ,, Հիսուսի հետ միասին լինելու միտքը, նրա հետ հավերժ միասնության մեջ լինելը, նրա փառահեղությունը կիսելը, տառապանքից, չարից, մահից ազատված լինելը, գիտակցելը, որ շուտով նրա մոտ ենք լինելու, ուրախություն է, որը մենք ունենում ենք, անգամ, եթե դրա համար տեսանելի հիմք չկա: Հույսով ուրախությունը հոգու հիանալի խարիսխ է:

Որպեսզի խարսխի մասին պատկերը ավարտին հասցնենք, ասենք, որ մենք ունենք շատ կարևոր խարիսխ Քրիստոսի հետ կապված հույսը: Բայց դուք



Շրջանային առաքյալի օգնական Ռոբերտ Նսամբա / Զամբիա/

Շրջանային առաքյալ Միխայել Էրիխ / Գերմանիա/

Շրջանային առաքյալ Լեոնարդ Ռիխարդ Քոլբ / ԱՄՆ/

Շրջանային առաքյալ Նոել Է. Բարնես / Քեյփ/

գիտեք, հրամանատարն է որոշում՝ խարիսխը ջրում թողնի, թե՞ վերցնի: Կանի, ինչպես նա դա կամենա: Եթե նա դուրս բերի խարիսխը, նավը քամուց և ալիքներից կթափահարվի: Եթե հրամանատարը տեղյակ չլինի և ողջախոհ չգտնվի ու խարիսխը դուրս բերի, նավը փոթորկից կխորտակվի:

Մեզնից է կախված, որ մեր խարիսխը հաստատուն լինի Հիսուս Քրիստոսով: Խնդրում եմ, եղբայրներ և քույրեր, դուրս չհանեք հույսի խարիսխը: Իսկ դա ինչպե՞ս կարող է լինել: Դա դժվար չէ բացատրելը. ամեն անգամ, երբ Հիսուսը սրտերում տեղ չունենա, խարիսխը դուրս կհանվի: Եթե մի բան ավելի կարևոր է, քան Հիսուս Քրիստոսը և նրա հետ միասնությունը, ուրեմն խարիսխը դուրս կհանվի և մեր հոգուն վտանգ կսպառնա: Որպեսզի ասածս ավելի հասկանալի լինի, մեկնաբանեմ եթե մեր խնդրանքների և ցանկությունների կատարումը Աստծով մեզ համար ավելի կարևոր լինի, քան նրա խոստումների իրականացումը, ուրեմն մենք վտանգի մեջ ենք:

Շատ բնական և նորմալ է, որ մենք ցանկանանք, որ Աստված պատասխանի մեր խնդրանքներին և մեզ տա այն, ինչը խնդրել ենք նրանից և հաճույքով կուզենայինք ունենալ : Դա,սակայն, քրիստոնեական հավատի մի մասն է, քանզի Աստծո մոտ ոչինչ անհնար չէ: Բայց, երբ դա ավելի կարևոր է դառնում, քան խոստումների իրականացումը, հիշեք վերը նշվածները, դա վտանգավոր կլինի:

Սա մի խորհուրդ է, որը մեզ է տալիս Սուրբ Հոգին. Աստծո սիրելի զավակ, հույսի խարիսխը դուրս մի հանիր: Մեր հույսը վստահելի է, այն հիմնված է Աստծով: Նա ամենազոր է, հավատարիմ, նա իրականացնելու է իր խոստումները, մեզ նվիրելու է հավերժական կյանք, ուղարկելու է Հիսուս Քրիստոսին, որպեսզի մեզ իր հետ տանի և արարելու է նոր երկինք ու նոր երկիր, որտեղ բոլոր նրանց համար, ովքեր հավատում են Քրիստոսին և հետևում են նրան, այլևս տառապանք չկա, այլևս մահ չկա: Դա մի խոստում է, որը նա կատարելու է:

Մենք ունենք այս խոստումը և դրա համար էլ հաստատուն ենք մնում, անգամ փոթորկի պահին, բայց նաև այն պահին, երբ հանդարտ է և Քրիստոսի գալստյան ժամանակը երկարում է: Անգամ, եթե մենք թույլ ենք, հույս ունենք Աստծո ողորմածության հանդեպ: Անգամ, եթե հաջողություն չենք ունենում և զգում ենք չարի իշխանությունը, շարունակենք ծառայել Աստծուն այն գիտակցությամբ, որ նա իր առաքյալների հետ է: Նա խոստացել է փրկություն, և մեր աշխատանքը իզուր չի լինելու: Եթե մենք Տիրոջ համար հոգով նրա հետ աշխատենք, նա մեզ կօրհնի: Այդ հույսը մեզ կլցնի ուրախությամբ:

## Հիմնական մտքեր

Աստված խոստացել է մեզ տալ հավերժական կյանք և ուղարկել իր Որդուն, որպեսզի մեզ իր հետ տանի: Մենք վստահությամբ և համբերությամբ սպասում ենք նրա խոստումների իրականացմանը: Այդ հույսը մեզ թույլ է տալիս հավատարիմ մնալ Տիրոջ մոտ, ինչ էլ որ լինի:

# Սեր, միութարություն և նոր կյանք

Մի շատ հին լուր կա, որ միշտ արդիական է մնում: Աստվածաշնչյան մի խոսք, որ հաճախ է հնչում երգերի տեքստերում և մի աղոթք, որ վաղուց է լսվել՝ ,, մաքուր սիրտ,, և ,, անփոփոխ ոգի,,՝ սաղմոսներից վերցրված այս խոսքերը լույս սփռեցին գլխավոր առաքյալի կողմից անցկացվող ժամերգությանը:

Մյունխենգլադբախում / Գերմանիա/ 2016-ի սեպտեմբերի 18-ին անցկացված ժամերգությունը ապրեց սրահում գտնվող և հեռարձակմամբ միացած շուրջ 25.000 մասնակից:

## Արարիչը

,, Ինչու՞ պետք է մենք այսօր աղոթենք,,. հնչում է հարցը,-,, Աստված իսկապես այդ աղոթքն արդեն լսել է,,: Որպես պատասխան՝ գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը նախ մի ցուցում է տալիս՝ ,, Արարիր իմ մեջ,Աստված,, , այս խոսքով սաղմոսագիրը տեղեկացնում է, որ փրկությունը Արարչից է գալիս: Այսինքն՝ ,,Եկեք Աստծու արարչագործությանը ներսից նայենք,,:

Ոչ միայն այն բանի համար, որ ,, Հիսուս Քրիստոսը բերեց Ավետարանը, որ նա իր կյանքը տվեց և զոհաբերվեց,,: Աստված այն բանի համար է հոգ տարել, որ այդ լուրը և ժառանգական մեղքից մաքրվելու համար մկրտությունը դարեր շարունակ փոխանցվեն՝ չնայած բոլոր ,, պատերազմներին, անարդարություններին և մարդկային բոլոր անբավարարություններին,,:

## Սիրտը

,,Աստված նվիրել է մի նոր սիրտ,, ասաց գլխավոր առաքյալը: Հին կտակարանում մեծ նշանակություն ուներ օրենքը կատարելը: Հիսուս Քրիստոսով ,, քարացած սիրտը – քարե տախտակի վրա գրված օրենքը – փոխարինվեց սիրո մոտիվացիայով,,: Աստված ,, չի պատժում, նա սիրում է մարդկանց և թույլ էտալիս միշտ զգալու իրեն,,:

,, Աստված հնարավորություն է ստեղծել, որ մեր սիրտը առօրյա մեղքերից ամբողջովին մաքրվի. Մենք՝ կարող ենք ասե. որ ունենք ողորմածություն, շանս՝ նորը սկսելու, կարծես ոչինչ էլ չի եղել,,: Այս առումով, մի կողմից կա արդարացման խոսքը, մյուս կողմից՝ նրա կամքի առկայությունը.,,Աստված հոգ է տարել այն բանի համար, որ մենք նրա խոսքը լսենք և ըստ դրա գործենք,,:

## Ոգին

,,Աստված ուղարկել է Սուրբ Հոգին և առաջին Հոգեգալուստից հետո նա այստեղ է, միշտ աշխատում է երկրի վրա: Նա չի թողել երկիրը, նրա մարդկանց ու հեռացել,,. շեշտում է եկեղեցու ղեկավարը: ,, Սուրբ Հոգին միշտ մեզ հետ է, նա միշտ խորհուրդ, մխիթարություն է տալիս և վկայում Հիսուս Քրիստոսին,,:

,, Մի նոր, հաստատուն ոգի,,- դա ոչ միայն վկայություն է առաքելության, այլ նաև՝ Սուրբ Հոգու շնորհի: ,, Դա նաև Արարչի արարչական գործ է, նա մեզ նոր կյանք է տվել: Սուրբ կնունքի միջոցով մենք ընդունել ենք այդ նոր կյանքը: Սա ուժեղության ոգին է, որ միշտ մեզ հին արարածին հաղթելու ուժ է տալիս,,:

## Պատասխանը

,,Տեսնու՞մ ենք մենք:Դա Աստծո արարչագործությունն է: Նա այս աղոթքը լսելի է դարձրել այն ժամանակվա հավատացյալներին,,. հնչեցրեց գլխավոր առաքյալը: ,, Ինչու՞ պետք է այսօր մենք աղոթենք,,: Նրա պատասխանը. ,, Որովհետև դրանով այնքան շատ բան ենք կարողանում ասել,,:

Մի կողմից ,, մենք պետք է Աստծուն շնոհակալ լինենք նրա փրկչական արարչագործության համար,, և մյուս կողմից՝,, դրանով արտահայտենք նաև մեր պահանջները,,: Եվ ապա հնչում է աղոթքը. ,, Տեր, նվիրիր ինձ քո ողորմածությունը, մաքրիր ինձ, տուր քո խոսքն ու ներումը, և օգնիր ինձ: Ես ուզում եմ Քրիստոսով նոր արարած դառնալ: Օգնիր ինձ, առանք քեզ չի լինում,,:

Լուսանկարը՝ Ֆրանկ Շուլցի

# ՀԻՍՈՒՍՆ ՕՐՀՆՈՒՄ Է ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

/ՄԱՏԹԵՈՍ 18,19/

Այն ժամանակ նրա մոտ մանուկներ բերվեցին, որ նրանց վրա ձեռք դնի ու աղոթք անի:

Աշակերտները փորձում էին երեխաներին Հիսուսից հեռու պահել: Նրանք կարծում էին, որ Հիսուսը կձանձրանա: Նրանք մտածում էին, որ երեխաները կխանգարեն Հիսուսին, քանի որ նրանք չգիտեին, թե Հիսուսն ինչքան շատ է սիրում երեխաներին: Հիսուսը տեսնում է, որ աշակերտները ուզում են երեխաներին հեռացնել, ասում է.,, Թույլ տվեք այդ մանուկներին և մի արգելեք, որ նրանք ինձ մոտ գան, որովհետև երկնքի արքայությունը այդպիսիներինն է,,:
Ապա նա ձեռքերը դնում է երեխաների գլուխների վրա և օրհնում նրանց:
Մեկ ուրիշ անգամ աշակերտները ցանկանում են Հիսուսից իմանալ, թե ով է մեծը երկնային թագավորությունում:
Հիսուսն իր մոտ է կանչում մի մանուկի, նրան կանգնեցնում է նրանց մեջ և ասում. ,, Ճշմարիտ եմ ասում ձեզ,

եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի: Ով իր անձը խոնարհեցնում է ինչպես այս մանուկը, երկնքի արքայության մեջ նա է մեծ,,: Հետո նա շարունակում է խոսել.,, Եվ ով որ իմ անունով մի այսպիսի մանուկ ընդունելու լինի, ինձ կընդունի: Եվ ով որ ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, նրա համար լավ կլինի, որ նա սուզվի ծովի խորքը: Այս փոքրիկներից մեկին չարհամարհեք, ասում եմ ձեզ, որ երկնքում նրանց հրեշտակները մշտապես տեսնում են երեսն իմ Հոր, որ երկնքում է, որովհետև մարդու Որդին եկավ փրկելու կորածը,,:

Աստվածաշնչյան ժամանակներում սերունդ ունենալը կարևոր էր, քանի որ նրանք պետք է մեծահասակ ծնողների համար հոգ տանեին: Քանի դեռ փոքր էին, երեխաները անտիկ հասարակությունում, արդարև, մեծ նշանակություն չունեին: Նրան դեռ չէին կարող օգնել ընտանիքի ապրուստին, նրանք նաև չէին կարող պահպանել կրոնական կանոնադրությունները: Քանի որ բժշկական սպասարկում գրեթե չկար, շատ երեխաներ դեռ վաղ հասակում մահանում էին:



# ԱՅՑ ԳՎԵՆԴՈԼԻՆԵԻՆ՝ ԼԵ ՄՈՆԹ-ԴՈՐԵՈՒՄ / ՆՈՅԿԱԼԵԴՈՆԻԱ/

Ողջույն երեխաներ: Իմ անունն է Գվենդոլինե, տասը տարեկան եմ և ապրում եմ Նոյկալեդոնիայում:

Անշուշտ, ձեզնից շատերը չեն լսել այս կղզիների խմբի մասին: Եթե դու դուք նայեք երկրագնդին, Աստրալիայի աջ կողմում կտեսնեք Նոյկալեդոնիան: Ջեյմս Քուքը, անգլիացի մեծ հետախույզ ճանապարհորդը, կղզիները հայտնաբերել է 1774 թվին:



Նիկելի համաշխարհային պաշարների ¼-ը հայտնաբերվել է Նոյկալեդոնիայում: Նիկելը ապար է, որը կիրառվում է թանկարժեք մետաղների ստացման համար: Այն առկա է, օրինակ, լվացարանների, լվացքի մեքենաների, շարժիչների, սպասքի, զարդերի մեջ: Նիկելը չի թողնում, որ մետաղը ժանգոտվի: Իմ հայրը աշխատում է նիկելի մի մեծ հանքավայրում:

Նոյկալեդոնիայում ապրում է մի թռչուն, որին կարելի է միայն այստեղ գտնել՝կագուն: Նա չի կարող թռչել, դրա համար էլ հաչում է շան նման: Դա շատ զվարճալի է:

Ես ձեզ եմ ներկայացնում իմ ընտանիքը՝ իմ մայր Լինդան, իմ հայր Ռիխարդը և իմ եղբայր Քենդիվայը: Նա տասներկու տարեկան է և ինձ հետ հաճախում է կիրակնօրյա դպրոց: Մեր ետևում կանգնած է մեր կիրակնօրյա դպրոցի ուսուցիչը:

Սրանք կիրակնօրյա դպրոցի մեր համադասարանցիներն են:

Մենք բնակվում ենք Լե Մոնթ-Դորեռում /= Ոսկու սար/ գտնվող տներից մեկում: Քաղաքը կրում է այդ անունը, քանի որ այստեղ հին ժամանակներում գետնի մեջ ոսկի են գտել :

Լե Մոնթ-Դորեն գտնվում է մայրաքաղաք Նոումեայից մոտ 30 կիլոմետր հեռավորության վրա : Կիրակի օրերը, ամենաքիչը 45 րոպեում, հասնում ենք

այնտեղի եկեղեցին՝ ժամերգության / տես սլաքը/ :

Վերջերս մեզ այցելեցին ծառայող եղբայրներ Ֆրանսիայից, և ես նրանց համար գրեյպֆրուտ էի քաղել : Կարողացա՞ք ինձ գտնել գրեյպֆրուտի ծառի ճյուղերի ետևում:

Ես հաճույքով հոգ եմ տանում իմ կենդանիների համար, ես ունեմ մեկ շուն, մեկ կատու և մեկ այծ:

Թեև ես այնքան էլ այդպիսի տեսք չունեմ, բայց ես շատ եմ ուտում: Ես միշտ հայտնվում եմ այնտեղ, որտեղ համեղ ուտելիքներ կան: Լուսանկարն արված է բերքահավաքի տոնի օրը՝ համատեղ ճաշելու ժամանակ:

2015-ին մեզ այցելեց գլխավոր առաքյալը, մենք՝ երեխաներս, եկեղեցու առաջ երգով ողջունեցինք նրան : Մեր սրտերը շատ ուժեղ էին բաբախում, բայց շատ արտակարգ էր նրա հետ հանդիպելը:



Աղբյուրը՝ „Մենք՝ երեխաներս„ ամսագիր հրատարակություն 3/2017, լուսանկարները՝ privat, © pierre foto - Fotolia.com

Լուսանկարը՝ © maryd - Fotolia.com

# Մեղքերի թողություն - Նախապայման և ներգործություն

Մեղքերի թողությունն ամիջականորեն ճանաչելի է դարձնում Աստծո ողորմածությունը: Այնուամենայնիվ, ինչպե՞ս կարելի է դրան հասնել: Եվ ինչպե՞ս է այն ներգործում: - Մտքեր գլխավոր առաքյալ ժան-Լյուք Շնայդերի ուսումնական տեքստերից: Նա գրում է՝

Մեղքերի թողությանը / նաև ,, արդարացման խոսք,, է անվանվում/ հավատալը քրիստոնեական հավատի հիմնական բաղադրիչներից է: Մեղքերի թողությունը որոշակիորեն նշվում է հին եկեղեցական հավատամքում, այսինքն՝ Առաքելականությունում և Նիկիա-Կոնստանդնուպոլսի հավատամքում / Դավանաբանությունը Հարցերում և պատասխաններում, գլուխ 2 /, և նաև մեր հավատքի դավանաբանության 3-րդ դրույթում:

## Մեկ անգամ և ընդմիշտ

Մեղքերի թողության հնարավորությունը ստեղծվել է Քրիստոսի զոհաբերության միջոցով: Մեղքի տիրապետությունից հիմնովին ազատվելը տեղի է ունենում Սուրբ ջրով մկրտության միջոցով, որով լվացվում է ժառանգական մեղքը: Ժամերգության ժամանակ առաքյալը կամ նրա կողմից առաջադրված ծառայող եղբայրը Հիսուսի անունով տեղեկացնում է մեղքերի թողության մասին: Հավատացող սրտով ընդունելով՝ այն ի վերջո նպաստում է Աստծո հանդեպ գործած անհատական մեղքի ու պատքի մարմանը: Այնուամենայնիվ, ոչ մկրտությունը, ոչ արդարացման խոսքը չեն ազատում մեղք գործելու հակվածությունից: Հազիվ ենք ազատվում արդեն գործած մեղքից, նորից ենք մեղք գործում՝ չնայած բոլոր ջանքերին:

## Նախապատրաստված՝ արդարացման խոսքին

Մեղքերի թողությանը հասնելը պահանջում է եռանդուն նախապատրաստություն: Մենք պետք է՝

- ինքներս մեզ հիմնովին քննենք և խոստովանենք մեր սխալները,
- եղքերը խոստովանենք Աստծու առաջ: Դա նշանակում է, որ ոչ միայն մեր սխալները ճանաչենք, այլ նաև՝ մեր պարտքերը,
- զղջանք: Մենք պետք մեզ ուղղելու մեր պատրաստակամությունն արտահայտնենք,
- որոշենք մեր մերձավորների հետ հաշտվողականության ճանապարհով գնալու:

Եթե մենք այսպես գործենք, ապա, անկասկած, դա կօգնի մեր փրկությանը:

## Խաղաղություն Աստծո հետ

Արդարացման խոսքով մարվում են ոչ միայն մեր մեղքերը, այլ նաև մեզ է նվիրվում Հարություն առածի խաղաղությունը՝

- Տերը հաստատեց, որ՝ չնայած մեր մեղքերին, նա մեզ չի կշտամբում և նրա սերը մեր հանդեպ չի փոխվում,
- Հիսուս Քրիստոսը մեզ հիշեցնում է այն մասին, որ նա հաղթել է չարին: Թեև սատանան կարող է մեզ մոլորեցնել, բայց չի կարող մեզ Աստծու սիրուց բաժանել:
- Մենք կարող ենք համարձակվել՝ նորից սկսելու:

## Մոտիկ Աստծո զավակներին

Մեղքերի թողությունը նպաստում է, որ Աստծո զավակները միմյանց մոտիկ լինեն և Տիրոջ կողմից ցանկալի միասնությունն ուժեղացնեն՝

- Արդարացման խոսքից առաջ ,,Հայր մեր,, աղոթքով համայնքը խոստովանում է իր մեղքերը- մեզնից յուրաքանչյուրը հրապարակավ ճանաչում է իր սխալները և խոստովանում, որ ինքը ավելի լավը չէ, քան՝ իր մերձավորը:
- Այս ընդհանրական խոստովանությունը կապված է խնդրանքի հետ. ,, Փրկիր մեզ չարից,,- այս խնդրանքը ընդգծում է համայնքի համերաշխությունը մեղքի դեմ պայքարում. ,,Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցեք և միմյանց համար աղոթք արեք, որպեսզի բժշկվեք,, /Հակոբոս 5,16/:
- Արդարացման խոսքը տեղեկացվում է բոլորին- յուրաքանչյուրը կարող է լսել թողությունը, որն ասվում է մյուսներին, և դրա համար ուրախանալ:

## Արժանապատիվ լինել Սուրբ նթրիքին

Մեղքերի թողության նշանակությունից բխում է անմիջական մասնակցությունը Սուրբ Ընթրիքի տոնակատարությանը: Սուրբ Ընթրիքի արժանապատիվ ճաշակումը անժխտելի է Քրիստոսով կյանքի համար: Մեղքերի թողությունը բազմաթիվ պատճառներով անհրաժեշտ է Սուրբ Ընթրիքի արժանապատիվ ընդունման համար՝

- Մենք պետք է մաքրված լինենք, որպեսզի Հիսուս Քրիստոսի հետ հաղորդվելու միասնությունն ունենանք:
- Սուրբ Ընթրիքին մասնակցելը վերապահված է միայն մկրտվածներին, նրանց, ովքեր ձգտում են չարից հեռանալ, որպեսզի հետևեն Քրիստոսին: Նրանով, որ մենք զղջում ենք, որպեսզի մեղքերի քավություն ստանանք, ցույց ենք տալիս, որ մենք՝ չնայած մեր թերություններին, հաստատ վճռել ենք, որ այն խոստմանը, որ տվել ենք մկրտության ժամանակ, հետևենք: / Երեխաների մկրտության ժամանակ Հիսուս Քրիստոսին հավատալու և Ավետարանի համաձայն ապրելու այդ խոստումը տրվում է ծնողների կողմից, հետագայում այն ամրագրվում է երիտասարդ քրիստոնյաների կոնֆիրմացիայի երդման մեջ:/
- Սուրբ Ընթրիքի ժամանակ համայնքը հաղորդակցվում է միմյանց/ ,, կոմիունիկացիան,, Քրիստոսի և համայնքի հետ միասնությունն է/: Ճշմարիտ միասնությունը հնարավոր է միայն, երբ երկուստեք ներել են միմյանց :

Մեղքերի թողությունը թեև խորհուրդ չէ, սակայն այն մեծ նշանակություն ունի մեզ համար Սուրբ Ընթրիքը արժանապատվորեն ընդունելու և դրանով նաև Տիրոջ գալստյանը նախապատրաստվելու համար:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասե 243, CH- 8051 Ցյուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ Փբը հրատարակչություն, Ֆրանկֆուրթերշթրասե 233, 63263 Նոյ-Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Լուսանկարը՝ Մարսել Ֆերի

# Մեղքերի թողություն և առաքյալների պաշտոն

Մեղքերի թողություն՝ առանց առաքյալների պաշտոնի – հնարավո՞ր է դա: Ապագայում՝ իհարկե: Եվ այսօր էլ բացառելի չէ,- գրում է գլխավոր առաքյալը: Մի բան հաստատ է, որ պաշտոնի լիազորությունը հավատացյալներին տալիս է համոզվածություն:

Իր հարությունից հետո Հիսուս Քրիստոսը աշակերտներին առաջադրանք տվեց՝ իր անունով մեղքերի թողություն տալու.,, Ինչպես իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ուղարկում եմ ձեզ: Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի, եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի,, / Հովհաննես 20;21,23/:

Դավանաբանությունը մեկնաբանում է, թե ինչպես պետք է հասկանանք աստվածաշնչյան այս վկայությունը.,, Առաքյալների սպասավորության առաջադրանքն է... Հիսուս Քրիստոսի ծառայությունից և զոհաբերությունից բխող մեղքերի թողությունը մարդուն պարտադիր հայտնելը,, / Նորառաքելական եկեղեցու դավանաբանություն 2.4.4/:

## Հավատքի դրույթներից

Մեր հավատամքը երկու դրույթներով հիշատակում է մեղքերի թողության և առաքյալների առաջադրանքի հանդեպ հավատը : Հավատի երրորդ դրույթում հիշատակված ներումը համարվում է Աստծո գործ. միայն Սուրբ Երրորդություն Աստվածը կարող է մեղքերը ջնջել և նա դա կարող է անել ցանկացած ժամանակ : Հիսուսը՝ Աստծո Որդին, իր մասին ասում է, որ ինքը զորություն ունի մեղքերը ներելու / հմտ. Մարկոս 2;3/, և դա, անգամ, խաչի վրա իր զոհաբերությունից առաջ: Հավատքի չորրորդ դրույթը ճշգրտորեն վերաբերում է Հիսուսի գործունեությանը իր եկեղեցում: Քրիստոսի եկեղեցում կարող են նրանք, ովքեր հավատում են Հիսուս Քրիստոսին՝ Փրկչին, մկրտության ողորմածություն ընդունել և արժանանալ ժառանգական մեղքից ազատվելուն : Եկեղեցու ներսում առաքյալները առաջադրանք ունեն պարտադիր հայտնել մեղքերի թողությունը:

## Ոչ մի ավտոմատ երևույթ

Առաքյալը հայտնում է ներումը, բայց Աստվածն է, որ ներում է: Մեղքերի ներման տեսանկյունից առաքյալների լիազորությունը ավտոմատ երևույթ չէ, քանզի մեղքերի ներման հայտնումը առաքյալի կողմից բավարար չէ մեղքերը լվանալու համար: Ներում կլինի միայն այն ժամանակ, երբ մեղավորը

պատրաստ լինի ապաշխարության և ներման: Մեղավորը վստահություն կունենա հասնելու իր մեղքերի ներմանը, եթե նա հավատալով վստահի առաքյալների պաշտոնի հեղինակությանը; Առաքյալները գործում են որպես Քրիստոսի սուրհանդակներ, նրանց միջոցով է, որ Հիսուս Քրիստոսն ինքն է հավատացյալին հայտնում արդարացման խոսքը: Ներումը, որը հայտարարվում է առաքյալի միջոցով, որպես չափանիշ կախված չէ մարդկանց կարծիքից ու համաձայնությունից : Մեղավորը կարող է Աստծուց ներում ստանալ, եթե անգամ մարդիկ շարունակեն նրան մեղադրել:

## Նաև առանց առաքյալների ծառայությա՞ն

Առաքյալներին վստահված մեղքերի թողության առաջադրանքը բացառու՞մ է ամեն մի հնարավորություն՝ առաքյալների ծառայությունից դուրս մեղքերի ներում ստանալու:

Նախ հիշենք, որ առաքյալների առաջադրանքը ժամանակային առումով սահմանափակ է, մանավանդ, որ այն կայանում է նրանում, որ տեղեկացնեն Քրիստոսի գալուստը և հավատացյալներին նախապատրաստեն այդ իրադարձությանը: Տիրոջ գալստյան ժամանակ ողջերն ու մեռյալները, ովքեր պատրաստ կլինեն նրա գալստյանը, հարություն կառնեն: Նրանք կստանան փառահեղ մարմին և կգնան դեպի Աստծո հետ հավերժ միասնության: Քանի որ նրանք մեղավորներ են, կարիք ունեն մեղքերի ներման, որպեսզի կարողանան Աստծո մոտ լինել: Այդ ներումը առաքյալների կողմից չի հայտարարվելու, այլ՝ ուղիղ Աստծո կողմից է թույլատրվելու: Այդ նույնը վերաբերում է մարտիրոսներին, ովքեր պետք է մեծ տխրությունից հետո հարություն առնեն: Վերջին դատաստանի ժամանակ Աստված ինքն է ողորմածություն նվիրելու նրանց, ովքեր իրավունք կունենան մտնել նոր արարչագործություն: Հավատքի մեր ուսմունքը հստակ նշում է նաև առաքյալների գործունեության ավարտից հետո մեղքերի ներմանը հասնելու հնարավորությունը : Առաքյալների պաշտոնը նորից կարգելուց առաջ ընկած ժամանակի համար մեր դավանաբանության մեջ ասվում է, որ պատկերացնելի է.,, … որ Աստված նաև այս ժամանակաշրջանում է հավատացյալին ներման ողորմածության արժանացնում,, / ՆԱԵԴ 6.4 2.2/:

## Պաշտոնի լիազորությունը տալիս է համոզվածություն

Ինչպիսի՞ն է այն մեր ժամանակներում: Այս առումով դավանաբանությունը հիմնավոր ճշմարտություն է հաղորդում. ,, Աստված կարող է իր ամենազորությամբ միշտ մեղքեր ներել,, / ՆԱԵԴ 12.1.8/: Ըստ այդմ, մենք կարող ենք չբացառել մեղքերի թողության հնարավորությունը՝ առանց առաքյալի կամ նրա կողմից առաջադրված սպասավորի մասնակցության: Ուստի, մենք չպետք է պնդենք, որ անհնար է, որ Աստված այսօր էլ հավատացյալի մեղքերը թողնի, անգամ, եթե նա չի հավատում նորառաքելական եկեղեցում գործող առաքյալին: Աստված կարող է լիովին՝ անկախ պաշտոնից և եկեղեցուց, մեղքերը թողնել: Բոլոր դեպքերում, կարող են նրանք, ովքեր առաքյալների ծառայությամբ ստացել են մեղքերի ներման խոսքը, վստահ լինել, որ իրենց մեղքերը իսկապես թողնված են

## Գործունեությունը ճանաչելի դարձնել

Անցյալում, երբեմն առաքյալների պաշտոնի կարևորությունն ամենից առաջ մեղքերը թողնելու առաջադրանքի մեջ էին տեսնում: Այդ տեսակետը ելնում էր նրանից, որ մեղքերի թողությունն առանց առաքյալների պաշտոնի հնարավոր չէ: Այս ժամանակ շեշտադրումը ընկած էր մեղքերի թողության վրա, Սուրբ Ընթրիքը ընդամենը արդարացման խոսքի մի հավելված էր՝ որոշ չափով մեղքերի քավության հաստատման ձև կամ ստացական: Այսօր մենք Սուրբ Ընթրիքը համարում ենք որպես ժամերգության կենտրոնական իրադարձություն, իսկ մեղքերի քավությունը՝ որպես այդ արդարացման անժխտելի նախապայման: Մենք հավատում ենք, որ Սուրբ Ընթրիքը կարևոր միջոց է Տիրոջ գալստյանը նախապատրաստվելու համար և, որ այդ խորհրդի լիազորությունը վստահված է առաքյալներին: Որպես Աստծո զավակներ, մենք առաջադրանք ունենք՝ մարդկանց ուշադրությունը կենդանի առաքյալների գործունեությանը հրավիրելու : Դա մենք կարող ենք անել միայն, եթե մենք լինենք առաքյալների ծառայության մի նամակ, որ ճանաչված և կարդացված է մարդկանց կողմից / հմտ. 2. Կորնթացիներին 3;2/: Մեզնից յուրաքանչյուրին և համայնքին պետք է ճանաչելի դարձնել առաքյալների պաշտոնի գործունեությունը:

Եկեք մենք էլ վկայենք, որ առաքյալները լիազորություն ունեն մեղքերի թողությունը հայտնելու: Ցույց տանք, որ նորառաքելական քրիստոնյաները՝

- քաջություն ունեն վիճարկելու և վճռական են՝ ինչ-որ բան փոխելու,
- պատրաստ են ներման և հաշտվողականության,
- ձգտում են միմյանց հետ միասնության:

Նման պահվածքը մեզ կտա Աստծո օրհնություն և կբարձրացնի մեր շրջապատի մարդկանց հետաքրքրությունը առաքելական գործերի հանդեպ:

Լուսանկարը՝ Ջեսիկա Կրեմեր և Հարավային Աֆրիկայի ՆԱԵ

# Ճանապարհին ազատել

Ինչը պետք է Աստծուն խանգարի հոգի փրկելու համար: Ոչի՞նչ: Բայց, անգամ Ամենազորի համար խոչընդոտ կա, իսկ մարդկանց համար միջոց՝ ճանապարհին ազատելու- Հինգ քայլով մաքրման հրամանին մասնակցությունը:

,, Կա մի բան, որ Աստված կարող է կանգ առնել մեզ փրկելիս,,: Սա պարզաբանել է գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը Սիլվերթաունում / Հարավային Աֆրիկա/. ,, Նա չի ուզում մեզ փրկել մեր սեփական կամքին հակառակ : Սա է բանալին- Աստված ցանկանում է մեզ փրկել, բայց մենք պետք է ճանապարհը հարթենք,,:

Շուրջ 100. 000 մասնակից է հաշվվել – մեծամասամբ տեսահեռարձակման միջոցով միացած- 2016-ի դեկտեմբերի 18-ի ժամերգության ժամանակ

## Քայլ առաջին՝ պայքարել մեղքի դեմ

FԳլխավոր առաքյալը անվանում է հինգ քայլ, որպեսզի Աստծո ճանապարհը մաքրվի- ամենից առաջ.,, Պետք է կամք ունենալ՝ ես ուզում եմ մերժել մեղքը, ես ուզում եմ հաղթել չարին,,; Սա հիմքն է ինչպես Սուրբ ջրով մկրտության, այնպես էլ մեղքերի քավության համար: Կարևորն այն է, որ մեղքի հետ ոչ մի փոխհամաձայնեցման չգնան.,, Մենք պետք է մերժենք մեղքը, բոլոր մեղքերը, ոչ միայն մեծ, տեսանելի, այլ՝ յուրաքանչյուր մեղք,,:

## Քայլ երկրորդ՝ սրբանալ ժամերգության համար

,, Աստված ուզում է մեզ հանդիպել ժամերգության ժամանակ,,: Որպեսզի դրա համար նրա ճանապարհը պատրաստենք, պետք է սրտում կարգապահություն ստեղծենք և ճիշտ առանցնորդություններն ընտրենք.,, Դու գիտես իմ հոգսերն ու կարիքները, իմ ցանկությունները, բայց դու գիտես,որ ինձ համար կարևոր է այն, որ ես ցանկանում եմ մուտք գործել թագավորություն,,: Ժամերգության համար սրբացմանը պատկանում է

Գլխավոր առաքյալ Շնայդերը Հարավային Աֆրիկայի տարածաշրջանային նոր եկեղեցու առաքյալների հետ

Գլխավոր առաքյալ / հանց/ Վիլհելմ Լեբերը և շրջանային առաքյալ /հանց/ Նոյել Էդվարդ Բարնեսը

նաև պահվածքը.,, Աստված, օգնիր ինձ՝ մեղավորիս, անկատար ծառայողիս, ճանաչելու նրան, ում դու ուղարկել ես,,:

## Քայլ երրորդ՝ Հավաքվել Հիսուսի անունով

Որպեսզի Հիսուսի ներկայությունը ժամերգության ընթացքուն ապրեն, անհրաժեշտ է, նրա անունով հավաքվելը.,, Մենք պետք է գիտակցենք. հիմա ես եղբոր և քրոջ հետ միասին եմ:- Նրանք այնքան կարևոր են Հիսուսի համար, որ նա նրանց համար զոհաբերվեց: Այսինքն՝ ես կարող եմ նրանց դիտարկել ոչ սոսկ որպես մեղավոր և տարօրինակ մարդկանց,,; Դա նաև նշանակում է՝ միմյանց մեջ գտնվող բոլոր խոչընդոտները ճանապարհից մաքրելը: ,, Դա մեզ համար Աստված չի անելու:- Նա սպասում է մեզնից, որ մենք մեր խնդիրները միմյանց հետ լուծենք և հաշտվենք: Դա է մեր առաջադրանքը,,:

## Քայլ չորրորդ՝ Ավետարանով առաջնորդվել

,, Աստված ուզում է նաև մեր մերձավորին փրկել:, Այստեղ հավատացյալները հավաքվել են նաև Ամենազորի ճանապարհը հարթելու: Մենք ուզում ենք, որ մեր վերաբերմունքը Ավետարանին արժանապատիվ լինի: Ոչ նորառաքելական քրիստոնյաները, ոչ էլ եկեղեցին արտակարգ չեն: Հենց դրա համար էլ.,, Եկեք մասնակցենք Աստծո գործին նրանով, որ մենք միմյանց ներենք, միմյանց սիրենք և բոլոր տարբերակումները վերացնենք,,:

## Քայլ հինգերորդ՝ ներգրավվենք համայնքին

Եվ, վերջապես, կա շատ պրակտիկ հնարավորություն Տիրոջ ճանապարհը մաքրելու.,, Դա վերաբերում է մեր զոհաբերությանը և մասնակցությանը համայնքային կյանքին,,: Գլխավոր առաքյալը կոնկրոտ վկայաբերում է Հիսուսի խնդրանքը աշակերտներին՝ Զատկի տոնին սենյակը նախապատրաստելու:

Եզրահանգում՝ մեղքի դեմ պայքարել, ժամերգության համար սրբացնել, Հիսուսի անունով հավաքվել, Ավետարանով առաջնորդվել, ներգրավվել համայնքին -,, սա է ճանապարհը, որպեսզի Փրկչի ճանապարհը պատրաստվի,,:

## Հիմնական մտքեր

Մարկոս 1;2,3

,, Ինչպես որ գրված է մարգարեների գրքում. ,, Ահավասիկ ես ուղարկում եմ իմ պատգամավորին քո առաջից, որ կպատրաստի քո ճանապարհը քո առաջ,,: Անապատում կանչողի ձայնն է.,, Պատրաստեցեք Տիրոջ ճանապարհը և հարթեցեք նրա շավիղները,,:

Մենք պարտաստում ենք Փրկչի ճանապարհը նրանով, որ պայքարում ենք մեղքի դեմ, մեզ սրբացնում ենք ժամերգության համար, հավաքվում ենք Հիսուսի անունով, Ավետարանի համաձայն ենք գործում և նվիրվում ենք համայնքին:bringen.

# Նախատեսում

| | |
|---|---|
| 02.04.2017 | Բուենոս Այրես / Արգենտինա |
| 05.04.2017 | Մենդոզա/Արգենտինա |
| 08.04.2017 | Պանամա / Պանամա |
| 09.04.2017 | Պանամա / Պանամա |
| 14.04.2017 | Վինթերտուր / Շվեյցարիա |
| 16.04.2017 | Մարբուրգ / Գերմանիա |
| 14.05.2017 | Թիլինգ / Ֆիլիպիններ |
| 18.05.2017 | Լամպունգ Սումատրա / Ինդոնեզիա |
| 21.05.2017 | Ջակարտա / Ինդոնեզիա |
| 28.05.2017 | Յոախիմշթալ / Գերմանիա |
| 04.06.2017 | Վիեննա / Ավստրիա |
| 11.06.2017 | Չիկագո / ԱՄՆ |
| 18.06.2017 | Ֆրանկֆուրտ / Գերմանիա |
| 25.06.2017 | Կենտրոնական Զամբեզիա / Զամբիա |
| 27.06.2017 | Մանզա / Զամբիա |
| 30.06.2017 | կա / Քենիա |

New Apostolic Church
International